# ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ (2025թ. )

| Մշտադիտարկումների օբյեկտը | Մշտադիտարկումների վայրը | Ցուցանիշը | Մշտադիտարկումների տեսակը | Նվազագույն հաճախականությունը | Արդյունքը |
|---|---|---|---|---|---|
| **Մակերևութային ջրեր** | Նախատեսված չէ | | | | |
| **Ստորերկրյա ջրեր** | Նախատեսված չէ | | | | |
| **Մթնոլորտային օդ** | բացահանքի տարածք, ճանապարհներ, արտադրական հրապարակ, ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի տարածք, ազդակիր համայնքներ, չափման կետի կոորդինատը՝ X- 4416122 Y - 8477625 | - հանքափոշի, (PM10 և PM2.5), ածխածնի օքսիդ, ածխա-ջրածիններ, ազոտի օքսիդներ, ծծմբային անհիդրիդ, | նմուշառում, չափումներ ավտոմատ չափման սարքերով | շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ | Անօրգանական փոշի – 0.518 գ/վրկ (0.9տ/տարի)<br>Ազոտի երկօքսիդ – 0.11 գ/վրկ (0.2տ/տարի)<br>Ածխածնի օքսիդ – 0.11 գ/վրկ (0.2տ/տարի)<br>Ածխաջրածիններ սահմանային – 0.022գ/վրկ (0.04տ/տարի)<br>մոխիր – 0.01 գ/վրկ, (0.017տ/տարի) |

<table>
<tr><td>Հողային ծածկույթ</td><td>Նմ N1. X-4467616<br>Y- 8470533</td><td>- հողերի քիմիական կազմը (pH, կատիոնափոխանակման հատկությունները, էլեկտրահաղորդականության հատկանիշներ, մետաղների պարունակությունը</td><td>նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն,</td><td>- տարեկան մեկ անգամ</td><td>
<table>
<tr><td>ՀՀ</td><td>Որոշվող ցուցանիշ</td><td>Նմուշի ծածկագիր և վերցման տեղը</td></tr>
<tr><td></td><td></td><td>N1</td></tr>
<tr><td>1.</td><td>Ջրածնային ցուցիչ</td><td>8.2</td></tr>
<tr><td>2.</td><td>Էլեկտրահաղորդականություն (μS/սմ)</td><td>1.8</td></tr>
<tr><td>3.</td><td>Fe, %</td><td>1.92</td></tr>
<tr><td>4.</td><td>Mn,</td><td>0.06</td></tr>
<tr><td>5.</td><td>Zn,</td><td>0.02</td></tr>
<tr><td>6.</td><td>Cu,</td><td>0.02</td></tr>
<tr><td>7.</td><td>Mo,</td><td>չ/հ</td></tr>
<tr><td>8.</td><td>Cr,</td><td>0.001</td></tr>
<tr><td>9.</td><td>Co,</td><td>0.0001</td></tr>
<tr><td>10.</td><td>Hg,</td><td>չ/հ</td></tr>
<tr><td>11.</td><td>As,</td><td>չ/հ</td></tr>
<tr><td>12.</td><td>Pb,</td><td><0.0001</td></tr>
<tr><td>13.</td><td>Ni,</td><td>0.001</td></tr>
<tr><td>14.</td><td>Sb,</td><td>չ/հ</td></tr>
<tr><td>15.</td><td>Cd</td><td>0.0001</td></tr>
<tr><td>16.</td><td>B</td><td>0.003</td></tr>
<tr><td>17.</td><td>Ba</td><td>0.06</td></tr>
</table>
</td></tr>
<tr><td>Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ</td><td></td><td></td><td></td><td></td><td>Տես բացատրագիրը</td></tr>
<tr><td>Աղմուկ և թրթռում</td><td>Բացահանք, հանքավայրից 1 կմ շառավղով</td><td></td><td>Գրանցում ձայնաչափով</td><td>տասնօրյակը մեկ անգամ</td><td>Տարեկան միջինը հանքավայրի սահմաններում կազմում է 51.0 Դբ: Հարակից բնակավայրերում աղմուկ չի լսվել:</td></tr>
<tr><td>Ոչ վտանգավոր թափոններ</td><td>-</td><td>-</td><td>-</td><td>-</td><td>-</td></tr>
</table>

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Վառելանյութի պահեստարաններ | - | - | - | - | |
| Ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ | - | - | - | - | - |
| Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակը | Բոլոր սարքավորումներն անցել են տարեկան տեխնիկական զննում | | | | |

Տեղեկատվությունը ներկայացրեց «ՆՅՈԼԻԹԱ» ՍՊԸ, Էրեբունի, Արին Բերդի 17/19, ՀՀ Արարատի մարզ Արարատ քաղաքից 4.3 կմ դեպի հյուսիս-արևելք, հեռ.095300097

(գտնվելու և գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը, կայքը, էլեկտրոնային հասցեն՝ առկայության դեպքում)

Տնօրեն՝ Ն.Հովհաննիսյան
(պաշտոնը, անունը, ազգանունը)

(ստորագրությունը, ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

**ԲԱՑԱՏՐԱԳԻՐ**

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՏՐԱՎԵՐՏԻՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՎԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ «ՆՅՈԼԻԹԱ-4» ՏԵՂԱՄԱՍՈՒՄ 2025Թ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի «Նյոլիթա-4» տեղամասը գտնվում է Արարատ քաղաքից 4.3 կմ հյուսիս-արևելք, Գոռավան բնակավայրից 3.1 կմ հարավ-արևելք, Ավազանու լեռնազագաթից 0.1 կմ հյուսիս:

Հանքավայրը հարում է Ուրծի լեռնաշղթայի նախալեռնային գոտուն՝ Սալակիտ (1020.6մ) և Ավազանի (1186.9մ) լեռների բլրային բարձրացումներին, որոնց անջուր ձորակներով մասնատված լանջերն իջնում են մինչև Արաքս և Վեդի գետերի հովիտները:

Շրջանի ջրագրական ցանցը թույլ է զարգացած, հիմնական միավորը սահմանային Արաքս գետն է իր վեդի ձախ վտակով: Շրջանի կլիման չոր է, խիստ ցամաքային՝ ամռանը օդի միջին ջերմաստիճանը հասնում է մինչև +40$^0$C իսկ ձմռանը՝ 10$^0$C: Տարեկան միջին ջերմաստիճանը +16$^0$C է: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը՝ 300մմ:

Տեղամասի լեռնահատկացման մակերեսը կազմում է 3.2 հա, որի ծայրակետային կոորդինատները բերված են ստորև (կոորդինատային համակարգը՝ ARM WGS-84)՝

1.X=4415929 Y= 8477559

2.X=4416107 Y= 8477558

3.X=4416111 Y= 8477723

4.X=4415944 Y= 8477741

5.X=4415944 Y=8477693

6. X=4415884 Y=8477688

7. X=4415920 Y=8477596

8. X=4415919 Y=8477591

Սույն հաշվետվությունում ամփոփված են 2025թ. ընթացքում տեղամասի լեռնահատկացման և շրջակա տարածքներում իրականացված հողի, մթնոլորտային օդի, աղմուկի, կենսաբազմազանության մշտադիտարկումների արդյունքները:

Տեղամասի իրավիճակային սխեման նմուշառման կետերով ներկայացված է նկ.1-ում:

## 1. Հողային ծածկույթ

Արարատյան հարթավայրին հարող այս նախալեռնային գոտում գերակշռում են գորշ կիսաանապատային հողերը (Brown semi-desert soils):

Այս հողերը բնութագրվում են բարձր կրայնությամբ: Քանի որ տեղամասի շրջանը հարում է տրավերտինի և կրաքարի շերտերին, հողի կազմում կալցիումի կարբոնատի ($CaCO_3$) շերտը հաճախ սկսվում է հենց մակերեսից:

Հումուսի պարունակությունը 1.76% է: Հումուսի ցածր պարունակությունը պայմանավորված է արիդ կլիմայական պայմաններով:

Գերակշռում է կալցիումը ($Ca^{2+}$)՝ մոտ 60-70%, և մագնեզիումը ($Mg^{2+}$)՝ 20-30%:




*Նկ.1 Իրավիճակային սխեմա - քարտեզ*

Քանի որ տեղամասը գտնվում է «Գոռավանի ավազուտներ» արգելավայրի հարևանությամբ հողերն ունեն որոշակի առանձնահատկություններ.

Հողերը հաճախ պարունակում են մեծ քանակությամբ էոլյան (քամու միջոցով բերված) ավազներ և լեռնային ապարների (կրաքար, տրավերտին) բեկորներ:

Լեռնալանջերին մոտ լինելու պատճառով հողաշերտը բարակ է (սակավազոր), հաճախ հանդիպում են մայրական ապարների ելքեր:

Հողերն ունեն հստակ հիմնային (ալկալիական) ռեակցիա (pH8.0-8.5, միջ.8.2), ինչը բնորոշ է կրային հիմքով հողերին:

Քանի որ շրջանը ծանրաբեռնված է հանքավայրերով և արդյունաբերական ձեռնարկություններով (Արարատի ցեմենտի գործարան). հողերը ենթարկվում են տեխնոգեն ազդեցության:

Ամփոփում. «Նյոլիթա-4» տեղամասում հողերը գորշ կիսաանապատային, կրակալված (կարբոնատային) և ավազակավային են՝ տեխնոգեն փոշու հավանական ազդեցությամբ:

## 2. Օդային ավազան

Տեղամասում օգտակար հանածոների շահագործման ընթացքում առաջացած փոշու և գազերի արտանետումների քանակը գնահատվել են լեռնահատկացման անմիջական

հարևանությամբ: Չափումների ժամանակ օգտագործվել է CEM DT-9880 բազմաֆունկցիոնալ սարքը:

Օդի արտանետումների 24 ժամյին և տարեկան չափումների միջինացված արժեքները հետևյալն են (աղ. 2).

Աղյուսակ 2

Օդի արտանետումների միջինացված քանակները

| Արտանետումների տեսակը | քանակները | |
|---|---|---|
| | տ/տարի | գ/վրկ |
| Անօրգանական փոշի, | 0.9 | 0.512 |
| ածխածնի օքսիդ, | 0.2 | 0.11 |
| ազոտի օքսիդ, | 0.2 | 0.11 |
| սահմանային ածխաջրածիններ, | 0.04 | 0.0022 |
| կախված մասնիկներ (մոխիր), | 0.016 | 0.01 |

## 3.Կենսաբազմազանություն

Տեղամասի շրջանը գտնվում է Երևանի ֆլորիստիկ շրջանի սահմանում: Շրջանի կենսաբազմազանությունը ձևավորվել է ինչպես սեփական աշխարհագրական դիրքի, բնակլիմայական, ռելիեֆային և լանդշաֆտային պայմանների, այնպես էլ մերձավոր տարածքների ֆլորիստական շրջանների բուսական և կենդանական աշխարհների ազդեցության ներքո:

Տեղամասը բնութագրվում է կիսաանապատային չոր բուսականությամբ: Բուսականության հիմնական ֆոնը օշինդրային և հազարատերևուկային կիսաանապատային համակեցություննն է՝ Օշինդր բուրավետ (Artemisia fragrans) և Հազարատերևուկ նեղատերև (Achillea tenuifolia):

Բացի ֆոնային տեսակներից, բնական կիսաանապատային բուսականությունը հարուստ է բարդածաղկավորների այլ տեսակներով Helichrysum armenium - Անթառամ հայկական, Xeranthemum squarrosum - Անմեռուկ չռված, Chondrilla juncea - Խիժաճարճատուկ կնյունանման և այլն), հացազգիների ընտանիքին պատկանող տեսակների մեծ քանակով (Aegilops cylindrica - Այծակն գլանաձև, Bromus japonica – Ցորնուկ ճապոնական, Taeniatherum crinitum - Երիզաքիստ երկարամազ, Poa bulbosa – Դաշտավլուկ սոխուկավոր), Խաչածաղկավորներին պատկանող Lepidium vesicarium - Կոտեմ բշտիկավոր տեսակով և այլն:

Համաձայն ՀՀ բույսերի Կարմիր գրքի տվյալների, տարածաշրջանում գրանցված են մի շարք բուսատեսակներ, մասնավորապես՝ Օշան Օշեի (Salsola aucheri), Օշան Թամամշյանի (Salsola tamamschjanae), Օշան թաղիքային Salsola tomentosa), Տանձենի Ֆյոդորովի (Pyrus theodorovi Mulk), Խռնդատ մերկացողուն (Verbascum nudicaule), Կարմրան ութառէջ (Tamarix octandra), Վարդատերեփուկ Իլյինի (Amberboa iljiniana Grossh):

Տարածքում կենդանական աշխարհը ներկայացված է սակավաթիվ տեսակներով:

Հանդիպում է Կանաչ դոդոշը: Հավանական տեսակներից է Փոքրասիական ճագարամուկը (Allactaga williamsi Thomas), Անդրկովկասյան կուրամկնիկը (Ellobius lutescens Thomas) և Պարսկական ավազամուկը (Meriones persicus):

Սողուններից հանդիպում են Շտրաուխի մողեսիկ-Eremias strauchi Kessler, թռչուններից՝ Կապույտ քարակեռնեխ - Monticola solitarius, Սևախայտ քարաթռչնակ - Oenanthe hispanica, Տնային ճնճղուկ - Passer domesticus, կաթնասուններից՝ Գորշ նապաստակ - Lepus europaeus Pallas, Թփուտային դաշտամուկ - Microtus majori, Սովորական աղվես - Vulpes vulpes:

Պետք է նաև փաստել, որ դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, տարածքն ամբողջությամբ արտադրական տարածք է, ինչի պարագայում բնական բուսածածկ, հողածածկ, վայրի կենդանիներ կամ դրանց ապրելավայրեր չկան:

Դիտարկվող տարածքը չի առնչվում բնապահպանական տեսանկյունից խոցելի, կամ բնության հատուկ պահպանվող տարածքների հետ:

Տարածաշրջանի բնական էկոհամակարգի, դրա բաղադրիչների, բուսական ու կենդանական տեսակների պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումը ապահովելու նպատակով տարբեր ժամանակահատվածներում շրջակա տարածքներում կազմակերպվել են մի շարք բնության հատուկ պահպանվող տարածքներ. Համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N 1059 որոշման, ՀՀ Արարատի մարզում գտնվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցը, «Գոռավանի ավազուտներ» և «Խոր վիրապ» պետական արգելավայրերը:

Տեղամասին ամենամոտը «Գոռավանի ավազուտներ» արգելավայրն է, որը գտնվում է տեղամասի 1կմ հյուսիս-արևմուտք:

Ծրջակայքում պատմամշակութային, բնական, հիդրոլոգիական և կենսաբանական հուշարձաններ առկա չեն:

Դաշտային մշտադիտարկումների ընթացքում դիտազննումներով մինչև 1կմ շառավղով ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված բուսական կամ կենդանական տեսակների, աճելա- և ապրելավայրեր չեն արձանագրվել:

***Հաշվետվությունն ու բացատրագիրը կազմեց ԱՁ Շ.Խաչատրյանը***